ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-19/15» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում գնային առաջարկներ գնահատող հանձնաժողովի նիստի

(Հայտերի գնահատման նիստի ամփոփման մասին)

29.11.2019թ.

ք. Երևան *Ժամը՝ 15:00-ին*

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ *Անահիտ Մալխասյան*

Անդամներ՝ *Լևոն Մուրադյան*

Դավիթ Խաչատրյան

Հայկ Խուրշուդյան

Մովսես Ասրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ *Հասմիկ Ղազարյան*

Օրակարգ՝

1. **«ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-19/15» <u>ծածկագրով մրցույթի արդյունքների ամփոփման մասին</u>**

1.1 Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության 2019 թվականի կարիքների բավարարման համար՝ **գրասենյակային ապրանքների** ձեռքբերման նպատակով **«ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-19/15»** ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության շենքում, ք. Երևան, Մաշտոցի 47 հասցեում՝ http://www.armeps.am/ էլեկտրոնային կայքով, 2019 թվականի նոյեմբերի 29-ին, ժամը 15:00-ին:

1.2 Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց, որ ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հարցմանը 1 -ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով հայտ ներկայացրած մասնակցի փաստաթղթերը համակարգում չերևալու վերաբերյալ ստացվել է պատասխան, որ կցված ֆայլերը վերականգնվել են հանրային գնումների համակարգում, սակայն դրանք վնասված են, և խնդիրը ծրագրային չէ, հետևաբար տվյալ չաբաժիններով մրցույթը պետք է համարել չկայացած:

1.3 Միևնույն ժամանակ, հաշվի առնելով **«ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-19/15»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից 4-րդ չափաբաժնի վերաբարյալ ներկայացված գնահատման թերթիկներ, ինչպես նաև այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից սահմանված ժամկետում չի ստացվել մրցույթի 4-րդ չափաբաժինով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցման եզրակացությունը, ինչով էլ պայմանավորված՝ ղեկավարվելով 04.05.2017թ. ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով.

2. **<u>Հանձնաժողովը որոշեց</u>**՝

2.1 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած,
4-րդ չափաբաժնով հաղթող ճանաչել «ՇՏԱՄՊ-Ն.Մ.Ռ» ՍՊԸ-ին:

Հաստատել **«ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-19/15»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ անգործության ժամկետ չի սահմանվում քանի որ ընթացակարգին միայն մեկ մասնակից է մասնակցել:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- *Ա. Մալխասյան*

Անդամներ՝ ---------- *Հ. Խուրշուդյան*

---------- *Լ. Մուրադյան*

---------- *Դ. Խաչատրյան*

---------- *Մ. Ասրյան*

Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- *Հ. Ղազարյան*